

ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՅՈՒ «ՎԱՍՆ ԱՆՑԱԻՈՐ ԱՇԽԱՐՀԻՍ»
ԲԱՆԱՍՏԵՂՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Հ. ԹԱՄՐԱԶՅԱՆ

Միջնադարյան հայկական ձեռագրերում կան Անանիա վարդապետի անունով մի խումբ խրատներ¹, որոնցից ութը, ինչպես ցույց տվեց քննութիւնը², պատկանում են X դարի նշանավոր հայ մատենագիր Անանիա Նարեկացու գրչին: Դրանք, մեկի բացառությամբ, ամբողջական շարք են կազմում, գրված են խաչիկ Արշարունի եպիսկոպոսի (հետագայում խաչիկ Ա Արշարունի կաթողիկոս) պատվերով՝ մինչև 972 թ.:

Նշված շարքի մեջ իրենց նշանակությամբ առանձնանում են «Յաղագս զղջման և արտասուաց» և «Վասն անցաւոր աշխարհիս» խրատները: Սրանցից առաջինը ունի և՛ տեսական, և՛ գեղարվեստական արժեք, իսկ երկրորդն իր բնութիւնով զուտ գեղարվեստական երկ է և տեսական խնդիրներ չի շոշափում: Այս երկու խրատները մերժում են արքայական ունեն միմյանց հետ. «Վասն անցաւոր աշխարհիս» խրատում գեղարվեստական արտահայտութիւն են գտել բանաստեղծական արվեստի մասին «Յաղագս զղջման և արտասուաց» խրատում մշակված տեսական դրույթները: Համառոտ անդրադառնանք դրանցից հիմնականներին: Թեև այդ դրույթները վերաբերում են գլխավորապես աղոթքին, բայց մի շարք դեպքերում տարածվում են ընդհանրապես գեղարվեստական ստեղծագործության վրա՝ որպես բանաստեղծական արվեստի ընդհանուր սկզբունքներ: Գեղարվեստական երկը, ըստ Անանիա Նարեկացու, կազմված է «պատճառներից» կամ «օրինակներից», որոնց հիմքում ընկած է Աստվածաշնչից կամ բնութիւնից վերցված որևէ պատկեր, ուստի հեղինակի մշակած տեսութիւնը կարելի է անվանել բանաստեղծական պատկերի տեսութիւն: Պատկեր-օրինակների պատեւառ անվանումը պայմանավորված է նրանով, որ դրանք, ըստ հեղինակի, մարդու հուղաշխարհում դրական և բացասական զգացմունքներ արթնացնելու պատճառ պետք է հանդիսանան: Իսկ այդ զգացմունքների հիմքում ընկած է յղջումը, որին գլխավոր դեր է վերապահվում աստծո հետ հաղորդակցվելու ամենօրյա ծեսի ընթացքում, ուստի այդ օրինակները հաճախ անվանվում են զղջման պատճառներ: Հեղինակը գլխավոր ուղադրութիւնը դարձնում է պատկերի հուղական հագեցվածութիւնը: Ըստ նրա պատկերը պետք է լինի զգացմունքային, «զղջական», որպեսզի կարողանա ազդել մարդու սրտի վրա և արտատուք քսմել նրանից: Այն պիտի անմիջականութեան և հուղականութեան նուրբութիւն ու ունենա, ինչպես ժողովրդական բանահյուսութեան մեջ ողբասացների ու ծաղրածու-

¹ Նշված խրատների ցանկը տե՛ս Ա. Ն. Թ. ԹԱՄՐԱԶՅԱՆ, Հայկական մատենագիտութիւն, հատ. Ա, Երևան, 1959, էջ 786—797:

² Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1979, № 11, էջ 78—92:

ների արվեստը. «Զոր արինակ երթան մարդիկ ի տուն սոյն և անդ որք զմեռեալն լան՝ ողորմելի ձայն արձակեն և լսողքն ակամա զսիրտն ճմլեն և յարտասուս հարկանին, և յորժամ երթան մարդիկ ի տուն հարսանեաց և անդ ծաղրածուր կատականաց բանս խաւսին և լսողքն ակամա ի ծաղր դան՝ այսպէս և դու, յորժամ սիրտդ քարանա և ոչ կարես արտասուել՝ զղջման բանս և արինակ ած զմտաւ, զի սիրտդ ի զղջումն դա և արտասուս բղխէ»³:

Այդ նայատակին հատնելու համար, ըստ հեղինակի, ստեղծագործողն իր պատկերները, զղջման օրինակները պետք է վերցնի երկրային կյանքից. «Զոր արինակ հողագործքն յառաջագոյն պատրաստեն զանաւթ գործոյն, մինչդեռ ոչ է հասեալ ժամանակ վաստակոյն, այսպէս և դու՝ զաւրն ամենայն արինակ իմացիր ժտութեան՝ յերկրաւորացս աստի, վասն որոյ ասէ առաքեալն. «Աներևոյթքն աստուծոյ արարածովքս իմացեալ տեսանի[ն]»⁴:

Այդ պահանջը բացատրվում է նրանով, որ մարդիկ իրենք էլ բնությամբ մարմնավոր են և նրանց մեջ զգացմունք արթնացնելու համար պետք է դիմել «երևելի»՝ տեսանելի օրինակների. «Այլ եթէ ասիցես, եթէ զարինակս յերկրաւորաց աստի առեալ ես և մեղադրես||/... քանզի և մեր մարմնաւոր եմք և զառակ արինակին երևելի մարթի առնուլ, որպէս տէրն՝ զերկնաւորն երկրաւորօքս արինադրէր և վասն մեր զիջանելոյ (զղջանալոյ)՝ նուաստ արինակաւ...»⁵: Ստեղծագործողը պետք է ընտրություն կատարի երկրային կյանքից վերցված այդ տեսանելի պատկերների մեջ և իր ստեղծագործութիւնը հյուսի այն պատկերներից, որոնք հուշական ներգործութիւն են ունենում նրա բնության վրա. «Փորձեա զբնութիւնդ, թէ յորպիսի՞ պատճառէ գա զղջումն և յայն յաճախեա, և դարձեալ միտ դիր, թէ յորպիսի՞ պատճառէ զ(շ)իջանի և զայն ի բաց ընկեա...»⁶:

Հեղինակի այս և նման հայացքները խարսխված են այն հավատի վրա, որ արվեստի ծնած զգացմունքի ուժով մարդը կապվում է աստծո հետ, վերափոխվում բնությամբ, շնորհներ ընդունում նրանից: Ուստի արվեստի գերագույն դերն ու նպատակը նա տեսնում է մարդուն զգացմունքային լարվածության, էքստազի հասցնելու կարողության մեջ: Դրանով են պայմանավորված այն սկզբունքները, որ նա դնում է արվեստի ստեղծագործության հիմքում և Վորոնց կիրառումը մենք տեսնում ենք «Յաղագս զղջման և արտասուաց» խրատում ղեկավարված դեղարվեստական հատվածների ու ամբողջական աղոթքի մեջ և «Վասն անցաւոր աշխարհիս» խրատում, որը, ինչպես ցույց կտանք, դուրս է գալիս խրատի ժանրային շրջանակներից և իր բնույթով գեղարվեստական հորինվածք է:

Խրատաշարի կազմում խրատի խորագիրը հանդես է գալիս պատվիրատուի հարցի հիշատակության ձևով («Այլ և զայլ հարցեր, եթէ զիարդ կարժմարդն արհամարհել զերկրաւորս, որ անցաւոր է, եւ աստուծոյ միայն ցանկալ և արքայութեան նորա»)⁷. հետագայում, շարքից առանձնանալով, այն ձեռք է բերել իր նոր խորագիրը («Վասն անցաւոր աշխարհիս»): Հենց այս

3 Մաշտոցի անվ. Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. № 2680, էջ 309ր:

4 Նույն տեղում, ձեռ. № 2711, էջ 129ր:

5 Նույն տեղում, ձեռ. № 2680, էջ 315ա:

6 Նույն տեղում, էջ 309ր:

7 Նույն տեղում, ձեռ. № 5707, էջ 329ա:

խորացրով էլ խրատը զետեղված է բազմաթիվ ժողովածուներում ու ճառերն-տիրներում⁸։ Նրա անկախ գործածությունն ու տարածվածությունն պատճառն, ըստ երևույթին, պետք է որոնել ինքնուրույն գեղարվեստական արժեքի մեջ⁹։

Երկրաթին կյանքի անցողիկության բուն պաղափարը, որ արտահայտ-ված է խրատի խորագրում և նրա հրացման հիմքն է կազմում, հանդիսում է նաև նույն հեղինակի «Յաղագս զղջման և արտասուաց» և «Խօսք և խրատ անտարանական...» գործերում։ Այսպես, օրինակ, «Խօսք և խրատ անտա-րանական...»-ում հեղինակը գրում է. «Արդ յառաջ քան զամենայն պարտ է առ աստուած գտնիմ ունել, որ յերկրաւորացս արհամարհի առ այն սէրն, որ աստուծոյ բաղձայ։ Որպէս գիշերն, որ չի պայծառութիւն լուսոյն խաւար թուի, եթէ հանապազ գիշեր կայր, նա ոչ լինել (լիներ) որոշումն լուսոյ և խաւարի, այսպէս յորժամ զաստուած սիրես՝ երկրաւորս խաւարի յայնմ լուսոյն և որպէս երազ և ստուէր երեի...»¹⁰։ «Որ կամի առ աստուած սէր հաստատել և զընկերս տիրել ըստ պատուիրանին՝ զերկրաւորս արհամարհել (արհա-մարհել) պարտի»¹¹։

Բերենք «Յաղագս զղջման և արտասուաց» խրատի համապատասխան հատվածը¹², որը համահնչյուն է քննարկվող խրատի բովանդակությանը և մի անգամ ևս ցույց է տալիս այն գաղափարական ու գեղարվեստական ընդ-հանրությունը, որ ընկած է այս երկու խրատների հիմքում.

Եւ ասա բնդ միտս քո.

Ո՞չ տեսանես աշխարհականսն՝

գիարւհ ճեպին և գործեն զիրաքանչիւր անդաստանսն,

իսկ դու զհոգւոյդ անդաստանդ թողեալ ես անգործ.

եկն առաւաւտ և ոչ վաստակեր,

եհաս ևրեկ և գնաս(ս) ունայն ձեռաւք.

ո՞չ զիտես. երէ անորի ի մարմինդ,

բանգի այսաւ իբրեւ գերազ անցանէ

և վաղիւն որպէս զստուէր երեկոյին.

զմտաւ ած զայն, որ երեկ բնդ մեզ էին եղբարք մեր

և այսաւ ոչ երեին

այլ փոխեցան առ տէրն իւրեանց և մեր։

Արդ, իբրեւ հանապազ զայս զմտաւ ւածիցես, միտքդ ի զղջումն սովորի, և շնորհին արմատանա առ քեզ»¹³։

Ինչպես տեսնում ենք, հեղինակի աշխարհընկալման հիմքում ընկած է աշխարհի երևութականության ու անցողիկության գաղափարը, որ խոր կնիք

8 Նույն տեղում, ձև. № 4724 (էջ 151ր), 4726 (էջ 166ր) ևն։

9 Խրատը հրատարակված է, տե՛ս «Սիրոն», 1958, էջ 120—122։

10 Մատենադարան, ձև. № 640, էջ 25աբ։

11 Նույն տեղում, էջ 26ա։

12 Սույն հատվածը խրատում ևղած աղոթքի առանձին հատված-օրինակների ու ամբող-ջական աղոթքի նման կառուցված է ազատ լրանաստեղծության սկզբունքով և հնչողությամբ ենթարկվում է տողատման։

13 Մատենադարան, ձև. № 2680, էջ 314բ—315ա։

է թողել նրա հուղաշխարհի վրա և որից մշտապիս տնվում է նրա բանաստեղծական զգացմունքն ու ապրումը:

Ունենալով միշտ այդ փառակցութիւնը և «զղջական» պատկերների միջոցով ներքին խոսքի, մտասութեան վերածելով այն՝ մտորդը կարող է հասնել զղջման շնորհին, որ արվեստի մասին հեղինակի կառուցած տեսութեան անհրաժեշտ օղակներից է: Այստեղ ևս մենք դուրս գնենք նույնատիպ պատկեր — պատճառի հետ, որի քննութիւնն է կազմում խրատի հիմնական բովանդակութիւնը: Սակայն ի տարբերութիւն խրատում տեղ գտած մյուս «զղջական» պատճառների, որոնք աղոթքի բանաձև ունենին, այն դերժ է դիմումի կաղապարից և կառուցված է ներքին մենախոսութեան սկզբունքով, որ արտաքին աշխարհի երևույթներն իմաստավորելու, սեփական կենսափորձի գեղազիտական վերասլորման ու ինքնասրտահայտման ավելի լայն հնարավորութիւններ ունի, ավելի տարողունակ է քնարական զգացմունքի ծավալման համար: Դրա վառ օրինակն է «Վասն անցաւոր աշխարհիս» խրատը, որ գրված է նույն այս սկզբունքով՝ քնարական մենախոսութիւն է աշխարհի ունայնութեան և անցողիկութեան մասին, կառուցված նմանատիպ պատճառ — սպասկերների վրա: Խրատի սկզբում կարդում ենք. «Արդ, եթէ կամիս, որ յաղթես աշխարհի և ոչ ըմբռնիս ի կենցաղոյս սպտրանս՝ դու խորհրդեամբ միտ դիւ և իմաստութեամբ փորձեա, թէ սնոտի և անցաւոր է կեանք մարդկսն և որպէս զերազ լաներևոյթ լինի»¹⁴: Ահա նաև խրատի եզրափակիչ հատվածը. «Արդ, յորժամ երկրաւոր մեծութիւնս սպտրէ զմիտս քո, դու զայդ ամենայն զմտաւ ած և յաստուծոյ խնդրեալ օգնականութիւն, և շնորհիւն աստուծոյ յաղթես աշխարհի»¹⁵:

Ինչպես տեսնում ենք, այս հատվածները համահնչյուն են «Յաղագս զղջման և արտասուաց» խրատի վերոհիշյալ հատվածի հետ: Նրանցում նույնպես նշված է քնարական մենախոսութեան ուղին, որն աղոթքի նման տանում է գեպի երևութական աշխարհի հաղթահարում և աստվածահայեցողութիւն և փաստորեն ժանրային մի նոր դրսևորում է հանդիսանում:

Խրատը կառուցված է հակադրութիւնների վրա: Ներկայացնելով երկրային գեղեցկութեան, մարդկային փառքի ու վայելքի որևէ տեսարան, հեղինակը հակադրում է դրան նույն երևույթի արդեն անցած, չեղյալ վիճակը: Այսպես, օրինակ, «Եթէ մտանես ի տաճար վայելուչ գեղազործ և վայելես տեսութեամբ, իսկ յորժամ ելանես անտի՝ անցաւ, րկալտ դու, թէպէտ այն, որ ոչ ետես, և դարձեալ կարօտ լինիս տեսանելոյ, քանզի ոչ միայն յորժամ վախճանի մարդն՝ յայնժամ զրկի յայսց կենացս, այլ մինչդեռ կենդանի է՝ աւուր փառքն յօրն անցանի և պահուն՝ ի պահն:

Զի եթէ կոչես երգեցիկս և լսես ձայն ուրախութեան, երբ ձայնն յականջէդ կտրի՝ անցաւոր է, րկալտ դու, րկալտ այն, որ ոչ լսեաց, և դարձեալ ձեալ կարօտ լինիս լսելոյ»¹⁶:

14 Նույն տեղում, ձեռ. № 5707, էջ 329ա:

15 Նույն տեղում, էջ 330ա:

16 Նույն տեղում, էջ 329ա:

Երէ անաւասիկ յառնեմք և փառս տամք և անցանէ ուրախութիւնն,
 Եւ յորժամ տեսանես մարդ փառաւոր, զարդարուն,

դու զայն իմացիր,

Երէ անաւասիկ վախճանի և ի հող դառնա...

Եւ յորժամ տեսանես զարուն պայծառ և վայելուչ,

զայն ած զմտաւ,

քէ անաւասիկ անցանէ զարունս, և ձմեռն գայ:

Եւ յորժամ տեսանես առաւօտ զուարթ և ուրախարար,

զայն իմացիր,

քէ անաւասիկ անցանէ առաւօտս, և գիշեր լինի¹⁹:

Ստեղծագործութեան այս մասը ևս յաջի է ընկնում հաւակրկնութիւնների առատութեամբ (տե՛ս ընդգծված մասերը): Եթե ստեղծագործութեան առաջին հատվածն ունի արձակ բանաստեղծութեան բոլոր հատկանիշները, ապա երկրորդում այն մոտենում է ազատ բանաստեղծութեան կառուցվածքին: Երրորդ մասում առավել, քան երկրորդում, հակադրութիւնների խտացման շնորհիվ ուժեղանում է ուրիշը, առավել ընդգծվում է տողի ինքնուրույնութիւնը և ավարտվում է անցումը արձակ բանաստեղծութիւնից ազատ բանաստեղծութեանը: Այս մասը գեղարվեստական տեսակետից ամենակատարյալն է: Նուրբ ու գեղեցիկ համեմատութիւնների անելով բնութեան հակադիր երևույթների, տարբերքների ու մարդկային ճակատագրի միջև, բանաստեղծը մեծ արտահայտչականութեան է հասնում մարդկային բնութեան ու ճակատագրի ողբերգական հակասականութեան պատկերման մեջ.

Նաև մարդն կարի արագապէս փոփոխի,
 զի թէպէտ որպէս գերկինս բարձրանա,
 որպէս գետին մոխրանա,
 որպէս զամպ սփռի,
 և որպէս կաթիլ պակասի,
 որպէս ծաղիկ պայծառանա,
 և որպէս խոտ չորանա,
 որպէս բոց բորբոքի,
 և որպէս ծուխ լուծանի,
 որպէս մրրիկ փոթորկի,
 և որպէս սարդիոստայն լուծանի,
 որպէս հնոց սաստկանա,
 և որպէս առկայծեալ շիջանի,
 որպէս զծով յառնէ,
 և որպէս գաւազ ի խորս ընկղմի,
 որպէս ծառ վայելչանա,
 և որպէս դտերև թօթափի...²⁰:

Երկրային ամեն մի երևույթի, մարդկային ճակատագրի ամեն վիճակի մեջ հեղինակն ընդգծում է նրա անցողիկ բնութիւնը: Սակայն դրանից ընթերցողի մոտ ոչ թե հակակրօնի ու արհամարհանքի զգացում է առաջանում դեպի երկրայինը, այլ երկրային ու մարդկային գեղեցկութիւնների վաղանցիկութեան ու ողբերգականութեան զգացում: Երկրային կյանքն ու մարդուն

¹⁹ Նույն տեղում, էջ 329ր:

²⁰ Նույն տեղում:

հեղինակը ներկայացնում է ոչ թե մուսլ կողմերով, մեղսական ու արատավոր, այլ նուրբ ու ղեղեցիկ գույներով ու հուզական շեշտերով: Նա բանաստեղծականացնում է աշխարհն ու մարդուն.

Երբեմն որպէս լեռն հաստատուն կարծէ զինրն,
և երբեմն որպէս ստուէր աներևոյթ լինի,
Երբեմն որպէս դառիւծ գոչէ,
և երբեմն որպէս մծնի տկարանա,
Երբեմն որպէս հողմ սաստիկ ի դիմի հարկանի,
և երբեմն որպէս շամանդազ յօղս լուծանի,
Երբեմն որպէս հեղեղատ յառնէ,
և երբեմն որպէս խոիւ ի հողմոյ հալածի...²¹

Ողբերգոյթյան պատկերն ավելի խտանում է հաջորդ հատվածում, ուր մարդկային ճակատագրի տարբեր վիճակները հակադրված են առանց խոսքի դրամատիզմը մեղմող, նրան նրբություն ու քնարականություն հաղորդող նմանատիպ համեմատությունների օգնությամբ.

Այսօր ուրախ, և վաղին տրտում,
Ընդ առաւօտս առողջ, և ընդ երեկս ցաւագին,
Այսօր փառաւոր, և վաղին անարգ,
Այսօր մեծատուն, և վաղին աղքատ,
Այսօր ահարկու, և վաղին ահաբեկ,
Այսօր ի մեծութեան, և վաղին ի թաղման...²²

Հակադրությունների կուտակմամբ հեղինակը սրում է խոսքի դրամատիզմը ու ծավալում է մարդկային կյանքի ողբերգական հակասականության պատկերը.

Այսօր ի գանձի, և վաղին ի գերեզման,
Մի ժամ յաղթեաց, և դարձեալ յաղթեցաւ,
Այսօր ցանկալի, և վաղին ողբալի,
Ընդ առաւօտս բարեկամ, և ընդ երեկս թշնամի,
Այսօր ժողովէ, և վաղին ցրուէ,
Երբեմն ի միասին, և երբեմն բաժանեալ,
Այսօր ի շինութեան, և վաղին փախուցեալ,
Երբեմն միամիտ, և երբեմն երկմիտ,
Այսօր զորաւոր, և վաղին տկար,
Երբեմն ի բազում ծառա[յ]ից պաշտօն առեալ,
և երբեմն ինքն այլոց ի ծառայութեան...²³

Խորանում է հակադրությունը նաև ստեղծագործության ռիթմական կառուցվածքի՝ սկզբնական խաղաղ ու մեղեդային և այս հատվածում ծավալվող կտրուկ ու հատու ռիթմի միջև.

Այսօր հագեալ և վաղին կարօտեալ,
Երբեմն բերկրեալ, և երբեմն սարտուցեալ,

21 Նույն տեղում:

22 Նույն տեղում:

23 Նույն տեղում, էջ 329բ—330ա:

Այսօր տէր, և վաղիւն ծառայ,
 Երբեմն իշխան, և երբեմն ընդ իշխանութեան,
 Այսօր ի խաղաղութեան, և վաղիւն ի խռովութեան,
 Երբեմն երեւալ, և երբեմն կորուսեալ...²⁴

Ստեղծագործութիւններ հասնում է իր զգացմունքային կիզակետին, ապա հանդարտվելով՝ նորից մտնում իրեն բնորոշ էլեգիական ապրումի խաղաղ հունը. կարճ ու հատու տողերին փոխարինում են երկար ու ծավալուն տողերը, փոխելով ստեղծագործութեան ուժով ու վերադարձնելով այն սկզբնական՝ արձակ բանաստեղծութեան վիճակին, որով էլ ավարտվում է ստեղծագործութիւնը.

Այսօր խնդալից, և վաղիւն յայագին,
 Երբեմն ի լիութեան, և երբեմն ի նուազութեան,
 Այսօր անհոգ, և վաղիւն հոգաբեկ,
 Այսօր հայածեաց, և վաղիւն հայածեցաւ,
 Երբեմն սիրելի, և երբեմն ատելի,
 Այսօր մերձաւոր, և վաղիւն հեռաւոր,
 Երբեմն բոնաւորէ, և երբեմն բոնաւորեալ յայլ բոնաւորաց,
 Ընդ առաւօտս լուաւ աւետիս և ուրախացաւ,
 Ընդ երեկս եղև սուգ և ողբացաւ,
 Յափշտակեաց երբեմն զաղքատաց և ելից դտուն իւր գանձիւք,
 Յետո մատնեցաւ ի ձեռս այլ բոնաւորաց և չքաւորեցաւ,
 Շինեաց արարս բազմածախս և վաճելուչս,
 Յետո վախճանեալ եթող աւերակ,
 Անցանեն ընդ այն մարդիկ և ասէն.
 «Ո՛ր արդեօք իցեն շինողք սորա»²⁵:

Գործը հարուստ է նաև Աստվածաշնչից, հիմնականում Սողոմոնի գրքերից քաղված մեջբերումներով, որոնք մերշնչանքի աղբյուր են հանդիսացել Անանիա Նարեկացու համար: Այդ մեջբերումները չեն ընդհատում բանաստեղծութեան ընթացքը, այլ հմտորեն ներհյուսված լինելով ամբողջին ծառայում են հեղինակի ընդհանուր մտահղացման իրագործմանը: Այս հատվածում կիրառված սարտահայտչամիջոցներից են հարակրկնութիւնը (որպէս... որպէս, երբեմն... երբեմն, այսօր... վաղիւն, ընդ առաւօտս... ընդ երեկս), բազմաշաղկապութիւնը (և...և):

Ստեղծագործութեան մեջ մեզ հանդիպում են նաև բաղաձայնույթի և առձայնույթի գեղեցիկ օրինակներ (որպէս ծաղիկ պայծառանա... որպէս ծովալուծանի, որպէս բոց բորբուքի, որպէս հեղեղատ յառնէ, ի հողմոյ հարածի, ահարկու... ահաբեկ, մի ժամ յաղթեաց և դարձեալ յաղթեցաւ, ի շինութեան... փախուցեալ, անհոգ... հոգաբեկ): Օգտագործված արտահայտչամիջոցների մեջ առանձնանում է հակադրութիւնը, որի վրա կառուցված է ամբողջ ստեղծագործութիւնը: Պատկերավորութեան այս միջոցն ընդհանրապես ներհատուկ է ամբողջ միջնադարյան պոեզիային²⁶: Միջնադարյան հեղինակի մոտ այն միջոց է հանդիսանում խոսքի հուզական ազդեցութիւնը, լիցքը

²⁴ Նույն տեղում, էջ 330ա:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Տե՛ս Դ. Лихачев, Поэтика древнерусской литературы, М., 1979.

սրելու համար և լայնորեն կիրառված է մեր միջնադարյան գրականության մեջ: Բայց կիրառության այնպիսի չափերի, ինչպիսին այն հասել է Գրիգոր Նարեկացու «Մատյանում», չենք հանդիպում ուրիշ ոչ մի ստեղծագործության մեջ: Եվ դա բնական է, քանի որ իր չափերով ու ծավալով, ընդգրկմամբ ու խորությամբ «Մատյանը» գերազանցում է նմանատիպ բոլոր երկերին: Հակադրությունն ընկած է նրա ողջ կառուցվածքի հիմքում: Մարդու ներհակ բնությունն ու մեղսականությունն այնտեղ ավելի ազդեցիկ են այտահայտված նրա վարք ու բարքի և ներաշխարհի հակադիր վիճակների ցուցադրումով, որոնց կուտակումներով բանաստեղծը հասնում է մտքի ու զգացմունքի արտակարգ շիկացման:

Անանիա Նարեկացու վերոհիշյալ գործը ևս կառուցված է հակադրությունների վրա՝ լինի բնության տարբեր երևույթների, թե մարդկային տարբեր հոգեվիճակների, ճակատադրի տարբեր պրսևորումների հակադրություն: Հարափոփոխ են և՛ բնությունը, և՛ մարդը, և՛ այն ամեն կատարյալն ու գեղեցիկը, որ կա երևութական աշխարհում: Այդ ամենը դատապարտված է կորստի և ոչնչացման, և բնությամբ անկայուն լինելով՝ հեշտությամբ անցնում է իր հակադիր վիճակին:

Սակայն Անանիա Նարեկացու և Գրիգոր Նարեկացու մոտ հակադրությունը սոսկ գեղարվեստական հնարանք չէ, այն ընդհանրապես տիպական երևույթ է միջնադարի մարդու աշխարհընկալման համար: Այդ բախումը ամենից առաջ ծնվում է երևութական, անցողիկ աշխարհի և աներևույթ, հավիտենական աշխարհի հակադրությունից, որ բուռն ապրումների տեղիք է տալիս միստիկ բանաստեղծի հուզաշխարհում և յուրատեսակ բանալի է հանդիսանում նաև արտաքին, երևութական աշխարհի, ինչպես նաև մարդու մեղսական ու ներհակ բնության մեջ թափանցելու համար:

Աշխարհի երևութականության, ունայնության ու անցավորության զգացողությունը, որն արտահայտված է Անանիա Նարեկացու այս ստեղծագործության մեջ, բնորոշ է բոլոր դարաշրջանների միստիկներին. դրա վրա են հիմնականում խարսխվում նրանց բոլորի աշխարհայացքն ու գործելակերպը, նրանց աստվածահայեցողության իդեալը²⁷:

Անանիա Նարեկացին նմանատիպ հակադրությունների է դիմում նաև իր անձնական ճակատագիրը պատկերելիս, նրանից ստացած անմիջական հարվածների ազդեցության տակ: Անանիա Նարեկացուց պահպանվել է «Գիր խոստովանութեան»²⁸ անունով մի թուղթ, որ նա դրել է ժամանակի կաթողիկոսին՝ թոնդրակեցիության մեջ մեղադրվելու կապակցությամբ: Ջանալով հերքել այդ մեղադրանքը, նա դառնացած խոսքեր է ուղղում կաթողիկոսին, նկարագրելով այն տառապանքը, որ ինքը կրել է այդ ամբաստանության պատճառով: Եվ ահա, իր խոսքը ավելի պատկերավոր դարձնելու համար, նա դարձյալ դիմում է նմանատիպ հակադրությունների օգնությանը. «...և ես յայսմ ասացից գոհութիւն աստուծոյ, զի բարի է յուսալ ի տէր յամենայն կեանս»:

27 Слѣд П. Минин, Мистицизм и его природа, Сергиев Посад, 1913.

28 «Երանելուն հօր Անանիայի Գիր խոստովանութեան յաղագս սուտ կարճացն որ վասն նորա», «Արարատ», 1892, էջ 5—18:

Ի՛ բարեկեցության և ի թշուառության,
 Ի՛ փարթամության և յաղքատության,
 Ի՛ բարձրության և ի նուաստության,
 Յանդորրության և ի նեղության,
 Ի՛ փառաւորության և յանարգության,
 Ի՛ խնդության և ի տրտմության,
 Ի՛ հաշտության և ի խռովության,
 Ի՛ խաղաղության և ի հալածանս,
 Ի՛ սիրելության և յատելության,
 Ի՛ յղիության և ի տառապանս,
 Ի՛ բարբրանության և ի բամբասանս,
 Ի՛ զովության և ի պարսաւանս,
 Ի՛ պատիւ և յանպատության,
 Ի՛ մեծության և ի նուաստության,
 Ի՛ վեհագոյն վայելուչս յարկս բնակութեան և յաբտաբսել
յանիրաւաց
 Ի՛ հայրենի ժառանգության յամենայնիւ գեղեցկապէս յարմարեալ
 և՛ ի տարազութեան յամենայնէ զրկեալ և նուաղեալ,
 Առանց յարկի և ծածկութի, ի բոլոր պիտոյից սա՛մանեալ
կենաց մարդկութեանս»²⁹

Այս հատվածը համահնչյուն է հեղինակի վերոհիշյալ ստեղծագործության հետ։ Նրկուսի հիմքում էլ ընկած է նույն ապրումը և երկու դեպքում էլ այն նույնատիպ արտահայտություն է գտել։ Հենց այդ ապրումի անմիջականության մեջ պետք է որոնել նաև խրատի հուզականության գաղտնիքը։

* * *

Անանիա Նարեկացու բոլոր հայացքները, նրա պոետիկայի բոլոր տարրերը աչքս կամ այն չափով արտահայտված են Գրիգոր Նարեկացու ստեղծագործության մեջ, և դա խոսում է այն մասին, որ ուսուցիչը շոշափելի ազդեցություն է թողել իր աշակերտի բանաստեղծական ձեռագրի վրա։ Մեջ բերենք Գրիգոր Նարեկացու «Մատյանից» մի քանի հատված, որոնք իրենց բովանդակությամբ հարադատ են վերոհիշյալ բանաստեղծությանը։ Ահա կյանքի անցողիկությունը պատկերող մի դրվագ, ուր հակադրված են մարդկայինն ու աստվածայինը.

Եւ արդ, առ Երկրածի՞ն ոք պաղատեցայց
 Այրս մահացու ամենապատիւր,
 Եթէ ընդունայն է աղաղակելն,
 Առ մահկանացու բանական,
 Եթէ սուտ իցէ փրկութիւնն առ յուսոյն վստահութիւն,
 Առ մարդ ոք եղծական,
 Եթէ ընդ տկարութեան բանին՝ և նանիր է զօրութիւնն,
 Առ իշխա՞նս երկրաւոր գահից,
 Եթէ անցաւոր է ընդ ինքեանս և իւրեանցն բարութիւն...
 Առ թագաւորութիւնս աշխարհի արդեւք,
 Որք զմահացուցանելն միշտ արունստաւորեն, թան զկենագործելն,—
 Այլ առ թեղ, բարերար աստուած՝ օրհնեալ ի բարձունս,
 Որ կենդանի ես և զկենդանութիւն տաս ամենայնի,
 Որ և յետ վախճանին զօրես անեղծապէս նորոգելո՞ւ։

²⁹ Նույն տեղում, էջ 16—17։

³⁰ Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», բան ԾԱ, Ա։

թյամբ, քնարականությամբ, արտահայտչամիջոցների նուրբ կիրառությամբ, յնդվական բարձր կուլտուրայով: Գրված լինելով մինչև 972 թ.¹ «Վասն անցաւոր աշխարհիս»-ը փաստորեն X դարի հայ բանաստեղծության սկզբնավորման շրջանից մեղ հասած առաջին երկն է. որով բացառիկ արժեք է ներկայացնում ուսումնասիրողի համար և օգնում է վերհանելու այն հոգեվորստեղծագործական ակունքները, որից սնվել է Գրիգոր Նարեկացու ստեղծագործութիւնը: Օժտված լինելով գեղարվեստական բարձր արժանիքներով, այն թույլ է տալիս խոսելու իր արվեստի նրբութիւններին կատարելապես տիրապետած մի բանաստեղծի մասին, որի ժառանգութիւնից ժամանակը քիչ բան է պահպանել սերունդների համար:

СТИХОТВОРЕНИЕ АНАНИИ НАРЕКАЦИ «О МИРЕ ПРЕХОДЯЩЕМ»

Г. Г. ТАМРАЗЯН

(Резюме)

Стихотворение Анании Нарекаци «О мире преходящем» является прекрасным образцом средневековой армянской поэзии и занимает особое место не только в предшествующей назидательной литературе, но и среди сочинений художественного характера. Написанная до 972 г., она является первым сочинением периода нового подъема армянской поэзии в X в. и тем самым представляет большой интерес для изучения творческих истоков поэзии великого армянского поэта X—XI вв. Григора Нарекаци. Высокие художественные достоинства сочинения позволяют судить о его авторе, чье литературное наследие дошло до нас, к сожалению, далеко не полностью, как о совершенном поэте.